

## ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

### ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԼԱԹԵՑԻՆ (ԾԵՐԵՆՑ) ՄԱՆՐԱՆԿԱՐԴ

Միջնադարյան հայ մշակույթի գործիչների մեջ ուրուց տեղ ունի հիշատակագիր և զանձասաց, խմբագիր և մեկնող, բազմարդյուն գրիչ Գրիգոր Խլաթեցին։ Նրա կենացքությունները ոչ քիչ տվյալներ են հասել մեզ. բացի այդ, Խլաթեցու աշխատաբառների կապակցությամբ տուունասիրողները անդրադարձել են մաս այդ նարցերին։ Գրիգոր Խլաթեցին ծնվել է Խորա բաղարու 1340-ական թվականներին։ Հոր անոնքը Ծեր էր և այդ պատճառով նրան երբեմն կոչել են Ծերենց։ Նախապես, շորջ վեց տարի, աշակերտում է Վարդան ճգնավորի մոտ Արծիկի Յիզմաւայրուն։ Այնունակ զնում է Սյունիք՝ Հովհաննես Որտունեցու դպրոցը, և այդտեղ էլ ծանոթանում Գրիգոր Տաթևացու հետ։

<sup>1</sup> «Յիշատակարան Աղէտից Գրիգորի Խլաթեցու», աշխ. Գ. Ք. Խոլաթյանց, Վաղարշապատ, 1897։ **Մ. Արիջան**, Գրիգոր Խլաթեցի Ծիրենց, «Երկեր», Դ, Երևան, 1970, էջ 408—409։ **Գարեգին արքևպատկանիքան**, Խողովակեանք և Պողոսեանք հարց պատմութեան մեջ, Երևաղեան, 1942, էջ 40, 114, 119։ **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, Ա, Երևան, 1942, էջ 608—609։ Գրիգոր Խլաթեցու կամբը ու կենացքությունը նատու բնաւորան նոյն է դարձել պատմության իմաստուուն աշխատավից Սեղա Մարարյանի հումար։ Աշխատաբառները անոնիկ են։

Այթ տարի մնալուց հետո, երբ մահանում է Որոտնեցին, և երբ Լամկ-Թամորը ասպատակում և ավերում է Հայատանի այդ վայրերը<sup>2</sup>, Խլաթեցին ստիպված է լինու վերադառնալ իր հայրենի գալանը և Քաջրերմենաց Սոխարապանքում աշակերտում Սարգիս Վարժապետին։ Տար տարի անց նա ստանում է վարդապետական աստիճան և հաստատվում Արծիկի Յիզմավայրում։ Այստեղ էլ արդեն սկսվում է Խլաթեցու արգասալից գրծունեությունը։ Նու իր շորջն է հավաքում բազմաթիվ աշակերտներ. շորջ հիսուն տարի ձեռագործ է ընօրինակում, որոնք կամ նվիրում է Եկեղեցիներին և կամ վաճառելով՝ արդյունքը բաշխում աղքատներին։


Խլաթեցին միաժամանակ շրջագայում է Հայատանի տարբեր վայրերում (օրինակ, Գանձերի ժողովածուն կազմելու համար 1387 թ. լինում է նաև Արդիվանքում), իսկ 1406 թ. կեսերին, Վարդան Հոգոցեցու մահից հետո, նու ստանձնում է Խառարասի դպրոցի տեսչությունը<sup>3</sup>։

Յոթանասուն տարեկանից անց էր, երբ

<sup>2</sup> Այս տվյալը բերված է Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանից»։ Թվում է, այսուղ ժամանակական փորձիկ անհջողություն կա։

<sup>3</sup> Տե՛ս **Ա. Մաթևոսյան**, Զիոնագրագիտական սրբագրություններ, «Եջմիածին», 1968, Ե, էջ 61։

ովտի գնաց Երևաղիմ և, երկու տարի մնալոց ներու, վերադարձավ։ Անս այդ միջոցին տեղի է ունենում քրերի հարձակում Արծենի և Յիպսավանքի վրա, որ գրիգոր Խարթեցուն բռնեցին և հավատքը շորանակ պատճառով նամատակեցին (1426 թ.)<sup>4</sup>:



Նկար 1

Խարթեցու գրական կարևորագույն գործերն են Հայութավորքը և Գանձարանը։ Հաս որում, Հայութավորքի նոր խմբագրությունը կոչվել է իր անունով՝ «Ծերենց», իսկ Գանձարանում ավելացրել է նոր երգեր ու գանձեր։

Մյուս գործերից պեսք է հիշել Ծննդոց գորի մեկնությունը, Խրատ ծամատեղացը, Գովորացուն Սաղմոնի, Համելուկներն և այլն։ Գրիգոր Խարթեցու գրական գործությունն մեջ առանձնահատուկ հշանկություն է ստացել 1422 թ. շարադրված «Հիշատակարան սպասիցը» կամ «Պատմություն Լանկ-Թամորի նաշորդաց սև և

<sup>4</sup> Գրիգոր Խարթեցու նամատակության պատճենը (նրան պատճեն է բորդ թևկ Ռումիանը) շարություն է Թուլնա Մեծությունն («Նոր վիպար», էջ 264—272):

սպիտակ ոչխարավորացը»<sup>5</sup>։ Նրա տաղերից նիշտուակելի են «Գանձարան ունիմ անզ Վեզ, թագավոր իմ Հիսոս Քրիստոս» և «Ուղ մտուիխն»։

Ժամանակակիցներն ու նրա անհիշական հետևողիները ամենաբարձր տիտղոսներով են շնորհագարդել մշակույթի այս մեծանուն գործի անունը. «Զնովուր Բայրը մեր և զծնադ զմեծ բարունապետն Գրիգորիս որդի Ծերին»<sup>6</sup>, «Վարդապետին Գրիգորի եռամեծին»<sup>7</sup>, «Յասոսուածքբնակ ովհու, սպ մեծ վարդապետին Գրիգորի մականուն Ծերենց»<sup>8</sup>: Հետազոտմ իշխարքություն անունների գրեթե սրբացիում է՝ «Սուրբ վարդապետ», հիշատակիլում նվիրական այլ անունների կողքին Տաթևացի, Օրունեցի, Կեչառեցի, Բաղիշեցի և այլն<sup>9</sup>:

Նրա ձեռագրերը նաև նաև այսպիսի օրինակները նետազար ընդորինակությունների համար. «... լրանիր և ի լաւ սարինակէ, զոր էր ստուգ բանելք. սուրբ վարդապետն Գրիգոր Ծերենց»<sup>10</sup>:

Մեզ հայտնի են նաև Խարթեցու աշակերտներից մի քանիս անունները, որոնցից հասուլապես ոզում ենք առանձնացնել Սուարձել Բաղիշեցուն և Հովհաննես Խարթեցուն։

Գրիգոր Խարթեցու բնորդինական բազմաթիվ ձեռագիր-մատյաններից մեզ հայտնի են տասը:

1. Գանձարան, ձեռ. Մատ. № 5328, շորջ 1388 թ., Յիպսավանք, գրից՝ Գրիգոր Խարթեցի, ստացող՝ Թումա, թերթ՝ 293, թուլյա, 27×17 մեծության, երկայն, բոլորագիր: Գրից հիշատակարանը՝ 289 էջում:

2. Ալետարան, 1393 թ., Յիպսավանք, գրից՝ Գրիգոր Խարթեցի<sup>11</sup>:

3. Ժողովածու, ձեռ. Մատ. № 5435, 1400 թ., Խատարաստա վանք, գրից՝ Գրիգոր Խարթեցի, ծաղկող՝ Ներսես պատանի, ստացող՝ Սանիկը, թերթ՝ 584, թուլյա, 27,5×18 մեծության, երկայն, բոլորագիր: Գրից հիշատակարանը՝ 470 էջում:

<sup>5</sup> «Հիշատակարան աղէտիցի» նամատական բնագիրը՝ նամապատասխան ծանոթագրություններով հրատարակված է Լ. Ս. Խաչիկյանի «Ծեր դարի նալերն ձեռագրերի հիշատակարանների» Ա. Բանուրում, Երևան, 1955, էջ 272—288:

<sup>6</sup> Հիշատակարաններ, ժե, գ, էջ 324:

<sup>7</sup> Հիշատակարաններ, ժե, գ, էջ 345:

<sup>8</sup> Հիշատակարաններ, ժե, գ, էջ 347:

<sup>9</sup> Հիշատակարաններ, ժե, գ, էջ 152:

<sup>10</sup> Հիշատակարաններ, ժե, գ, էջ 52—53:

<sup>11</sup> Լ. Ս. Խաչիկյան, ժող. դարի նալերն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 599: «Ազգագրական Հանդէս», 1897, թ. էջ 281—284:

4. Ավետարան, 1402 թ., Մատուցան, Խաբա, գրիշ՝ Գրիգոր Խլաթեցի<sup>12</sup>:

5. Ծաղընտիր, ձեռ. Մատ. № 1520/1521, 1404—1406 թթ., գրիշ՝ Գրիգոր Խլաթեցի, ստացող՝ Սուելիանու, թերթ՝ 402/453, քույթ,  $62,5 \times 39$  մեծության, երկայն, բոլորագիր: Կան մասն հիշատակագրություններ:

6. Մատյան ողբերգության Գրիգոր Նարեկացու, ձեռ. Մատ. № 1573, 1413 թ., գրիշ՝ Գրիգոր Խլաթեցի, թերթ՝ 345, քույթ,  $15,3 \times 11$  մեծության, միասյուն, բոլորագիր: Գրչի հիշատակագրություններ:

7. Ժողովածու, ձեռ. Մատ., № 8775, 1415 թ., Երուսաղեմ, գրիշ՝ Գրիգոր Խլաթեցի, ծաղկող՝ Գրիգոր Երեց, կազմող՝ Գրիգոր, ստացող՝ Մկրտիչ, թերթ՝ 368, քույթ,  $18,5 \times 13,9$  մեծության, միասյուն, բոլորագիր: Գրչի հիշատակագրանք՝ 220թ էջուն:

8. Ավետարան, ձեռ. Մատ. № 3714, 1419 թ., Յիպսավանք, գրիշ՝ Գրիգոր Խլաթեցի, ստացող՝ Հովհաննես Երեց, թերթ՝ 265, մագաղաք:  $23,5 \times 16$  մեծության, երկայն, բոլորագիր: Գրչի հիշատակագրանք՝ 269թ էջուն:

9. Մատյան ողբերգության Գրիգոր Նարեկացու, ձեռ. Մատ. № 7019, 1423 թ., գրիշներ՝ Գրիգոր Երզնկացի և Գրիգոր Խլաթեցի, ստացող՝ Կիրակոս, թերթ՝ 168, քույթ,  $15,5 \times 12,8$  մեծության, միասյուն, բոլորագիր: Գրչի հիշատակագրանք՝ 164թ էջուն:

10. Գանձարան, ձեռ. Մատ. № 8366, 1425 թ., Յիպսավանք, գրիշ՝ Գրիգոր Խլաթեցի, ստացող՝ Աստվածատոր, թերթ՝ 212, քույթ,  $15 \times 11$  մեծության, միասյուն, բոլորագիր: Գրչի հիշատակագրանք՝ 212թ էջուն:

Այս տասը ձեռագրերից զատ Մատենադարանում գտնվում են մեկ-երկու այլ ձեռագրեր<sup>13</sup>, որոնց ընդօրինակությունները, հայտնաբար, անհանու չեն եղել Գրիգոր Խլաթեցու մասնակցությունից, թեև մեր այդ ենթադրությունը ճշգրտման կարիք ունի:

Չենագրերի հիշյալ ցանկից պարզ է՝ դասում, որ Խլաթեցին իրեն միշտ անվանել է գրիշ և այդ մասին միանման տողեր թողել. «Եւ արդ, գրեցա սա ի վաճառ Յիպսայ, ընո՞ հովանեսու ամենազոր տորք Նշա-

նի և տորք Ստեփանոսի, ձեռամբ յոզնամուշի և անիմաստ գրչի Գրիգորի պիտականուն վարդապետի, յամի ՊԿԸ (1419) թրականի, ի նայրապետութեան տասն Պատղոսի և յաշխարհակապութեան Ղարաբաղաֆին» (ձեռ. Մատ. № 3714):



Նկար 2

Որպես նաև ծաղկող նա կոնկրետ հիշատակություն չի արել (ինչպես մեր շատ մասնակիարիշները)<sup>14</sup>: Բայց անուղղակի մի բանի փաստեր հաստատում են, որ Գրիգոր Խլաթեցին քաջանություն է եղել նաև այդ արվեստին և ինըց էլ, մեծ մասամբ, հանդիսացել իր ընդօրինակած ձեռագրերի ծաղկողը: Որոնք են այդ փաստերը.

ա) Ակենայտնի Ըույն ձեռագրառն ենք տեսնում ինչպես բնագրերի, այնպես էլ նկարների բացատրագրություններում. իսկ վերջիններու, որպես կարգ, կառապիլում էին ծաղկողների կողմից: Խլաթեցու ձեռագրառն այս դեսպոտ տարակտանքի տեղիք չի տալիս: Ինչպես հմտու ձեռագրագետ Ա. Մաթևոսյանը նկատել է, «Գրիգոր Խլաթե-

<sup>12</sup> Տես «Հանդէս Ամսօրեա», 1917/1918 թթ. էջ 59: «Հիշատակագրանք», ժԵ, գ, էջ 308:

<sup>13</sup> Ձեռ. № 2783, Ծաղընտիր, 1408 թ., գ. Տարեկացի, Գրիշ Հարցմանց, 1413 թ., Խլաթարանու վանք, Մատ. № 917, գ. Տարեկացի, բարոգներ, 1416 թ., Մատ. № 2047:

<sup>14</sup> Օրինակ, Միմևն Արծիշեցին, Թումա Միմաննեց, նոյնիսկ Թորոս Ռումինը իրենց կրթեմն գրիշ են նամարից: Հատկապես Վապորականում «գրիշ» նամարկու ձևը շատ էր ընդունված:

ցին ինքնատիա գրչություն ունի, նույնիսկ որոշ տառերի իրեն հասուն գրչություն, որով անմիջապես մատնում է իրեն»<sup>15</sup>:

բ) Խլաթեցու ձեռագրերում հանդիպում են նրա՝ որպես նկարչի հուշող մեկ-երկու



Նկար 3

վկարությունները: Օրինակ՝ № 1520 Ժառանիի մանրանկարների կապակցությամբ (որ դրանք ծաղկել ու նկարագրել է Խլաթեցին) Ս. Մաթևոսյանը բերում է այսպիսի մի փաստ. 49-րդ պրակի լուսանցքներից մեկում «Քրիստոփի քառասունարայ ի տաճարին լրնայում» ճափի դիմաց նկարված է մի շքեղ տաճար և սոորին լուսանցքում Խլաթեցու ձեռորով գրված. «Այս արարի, որ թին ի ՊԵՇ էր: Տաճա, ի յայս տեղու եղաք»<sup>16</sup>: Դա արդեն նկարչի տուրագրության հման մի բան է:

գ) Այս դեպքերում, երբ նկարագրդումների հեղինակն այլ անձնակիրություն է, ձեռագրի հիշատակարանում կամ հիշատակագրություններում բարեխղճորեն նըշվում է հիշյալ անձնավիրության անունը,

<sup>15</sup> «Ձեռագրագիտական սրբագրություններ», («Հշմանման», 1968, Ե, էջ 80):

<sup>16</sup> Ձեռագրագիտական սրբագրություններ, («Հշմանման», 1968, Ե, էջ 80):

(օրինակ, 1400 թ. ժողովածուում ծավալող Ներսես պատահի, հավանաբար Խլաթեցու աշակերտներից): Իսկ երբ նկարների բացատրագրություններն ու բնագրի ձեռագրանքը դրւուրում է բացարձակ հոյզնություն (այսինքն երկու դեպքերում էլ Խլաթեցին է), բնականաբար, մեկ այլ նկարչի անուն չի հիշվում<sup>17</sup>:

Կարծում ենք, որ այս փաստարկություններն աւելացրելի են, և Գրիգոր Խլաթեցին հանդիսանում է իր ընդօրինակած ձեռագրերի նկարագրադումների հեղինակը:

Խլաթեցու պատկերագրադաշտ ձեռագրերից թեմատիկ մանրանկարներ պարունակում են երկուսը. Խառարաստա վանքում 1393 և Ֆիվանիանում 1419 թթ. ընդօրինակած Ավետարանները<sup>18</sup>: Առաջին Ավետարանի մասին տեղեկությունները քաղել ենք «Ազգագրական Հանդէսից». «Դիլիխիկայ գիղի նկեղեցում (Չափակը) կայ քառածալ, բատրակի թղթի վրայ երկշար, բոլորագիր տառերով գրուած մի Աւետարան, որ զարդարուած է Քրիստոփի մարդեղութեան տասնորու և չորս ավետարանիների եօթը պատկերներով: Աս կոչում է Ավետարիկի և ամէն կիրակի: քազմաթի ուխտարուներ ունի»<sup>19</sup>:

Կցկոտր այս տղերից երկում է, որ Դիլիխիկա գրողում գտնվող Ավետարանի ուղեցել է հարուստ նկարագրադումներ (տասնչորս թեմատիկ պատկեր), թեև փոքր-ինչ անորոշ է չորս ավետարանիների յոթ պատկերների իմաստը: Այսուղեւ երկու եթեադրություն կարելի է ամեն. կամ այլտարանիների հետ եղակ են նաև համապատասխան առարյաները<sup>20</sup> և կամ՝ պատ-

<sup>17</sup> Մաշտոցյան Մատևադադանի «Յոցակ ձեռագրացի» (Երևան, 1965, Բառ. Ա, Երևան, 1970, Բառ. Բ) հեղինակները ևս գտնում են, որ Խլաթեցու ընդօրինակած ձեռագրերի հեղինակը ինքն է: Տես № № 5328 (էջ 83), 8775 (էջ 811) և այլն:

<sup>18</sup> Խլաթեցու ընդօրինակած մոտ ձեռագրերը համատարար սղքառ են նկարագրադումներից. կան զիսագրադեր, լուսանցքագրադեր, զարդագրություններ, որոնք, բացառությամբ մեկ-երկու մետարքրության նմուշների, սպիրուկան ձևեր են ներկայացնում:

<sup>19</sup> «Ազգագրական Հանդէս», գիրք Բ, 1897, Թիվ իս, էջ 281:

<sup>20</sup> Հազվադեպ, բայց հանդիպում է ավետարանիների ամպիսի պատկերագրություն, երբ առայլները թեղադրում են ավետարանիներին: Պատրու առարյապ թեղադրում է Մարկոսին, իսկ Ղուկասին՝ Պողոս առարյապ (տես այդ մասին ամելի համագաւառընեւ Գ. Հովհաննես, Խաղաղացան կամ Պողոսի Հայոց Պատմության մեջ, մասն Ա, Վա-

վիրապունքերի դիմագործությունները, ինչպես  
դա կտևելու 1419 թ. բնորոշինակած ձե-  
ռազրում:

Ըստի ձեռագիր է 1419 թ. Ավետարանը: Ալգրի 1ա—4ր էջերը պարունակում են համարաբառի խորանազարդերի մեկնորյան բնագիրը, մի քանի, որի կարևորությունը մեծ է հայկական ձեռագիրերի խորանազարդերի զարդագրության իմաստային բացառությունների համար: Տվյալ հետքունյա պատկանելիությունն այնպիսի հրշամարտապատճեն և խորագիտակ մի նեղինակի, ինչպիսին Գրիգոր Խլաթեցին է, իրավունք է տալիս խորանազարդի մեկնորյան սույն բնագիրը դասել այլ կարգի լավագոյն զործերի՝ Ծնորհակու, Վարդանի, Սունեցու մեկնությունների շառողին:

Թեմատիկ մանրանկարները սկսվում են ծեռագիր հա էջից. «Մկրտչություն», «Ալլակերպություն», «Հխուսի հրաշագործությունները», «Ղազարոսի հարություններ», «Մուոք դեպի Երուսաղեմ», «Համբարձում» և «Ս. Հոգո Գալուստը»։ Այս ցանկից պարզ է դառնում, որ թերթաթափ են եղել «սոնական» մի շարք կարեռ տեսարաններ, որոնք պարտադիր են Ավետարաններում «Ավետումը», «Ծնննդը», «Ռունիվան», «Մատուռություններ», «Խաչելություններ», «Հարությունն», «Շմիկիր ամեռումը»։

Պահպանված պատկերները, բացառությամբ թերևս «Ղազարոսի հարության», ներկայացված են տիպիկ Վասպորականաց սխեմաներով, որոնք մեզ բաց բանության կամ աշխատանքության մեջ առաջանակագործություններից<sup>21</sup>: «Ղազարոսի հարությունը» Վասպորականում գրեթե պարտադիր դարձած թեմա է, որն ունի իր հասողականությունը: Հիսուսը հարություն է տալիս մռած Ղազարոսին՝ դրանով իսկ հավաստելով իր սատվածային հրաշագործ կարողությունը, միաժամանակ շեշտելով ապագա համընդհանուր հարության գաղափարը<sup>22</sup> (ինչին տեսնում էր հարությամբակներ շարունակ օտարի ծանր լին տակ գտնվող Վասպորականին):

Տեսարանն ավելի արխայիկ քնութե ունի. հիմնական միտքն արտահասովում է եղ-

Ղարշապատ, 1928, էջ 150—152): Վասպուրականի 16-րդ դ. մեկ-երկու ձեռագրից ևս այդպիսի օրինակներ են:

<sup>21</sup> Այդ մասնակիութիւնների մասին տես «Եղիշե-ծին», 1973, գ. էջ 48—53, 1974, գ. էջ 28—33, ԺԱ, էջ 49—52:

<sup>22</sup> Как факт подтверждающий возможность и действительность общего воскрешения (Иоанн Златоуст. Беседы на св. Иоанна 1665 с. 468-469).



Volume 4

բին Աերկա գտնվող Բեթղեհեմի հոդաների խմբով<sup>24</sup>. իսկ դա նկարին տվել է գեղարվետական-գաղտփարական որոշակի միտվածությունը<sup>25</sup>:

Գրիգորի մոտ Հիսուսին ողեկցում են երեք աշակերտ։ չկան ժողովրդի բազմությունը և այն։ Նման կարճառոտությունը ավելի հարազատ է նիս բնագրերին ու պատկերագրական-պայմանական ծերին։ Սակայն մեր նեղինակն, այսպես ասած, ժանրային մեկ-երկու մանրութերի ավելի ցայտուն արտահայտման շնորհիվ պատկերին հաղորդել է որոշակի աշխուժություն՝ պատեղով այն պատկերագրական չորսինմատիզմից ու կրավորականությունից։ Հիսուսի ոսքերն ընկած բույրերից մեկը՝ Մարթան, զլուստ բարձրացրած շատ բևեկան ետ է շրջել ու հաստ է հարդարությունուն։

<sup>23</sup> G. Millet, *Recherches sur l'Iconographie de l'évangile aux XIV<sup>e</sup>, XV<sup>e</sup>, et XVI<sup>e</sup> siècles*, Paris, 1960, p. 240-251.

<sup>24</sup> Ինչպես դա ներկայացված է Հովհաննի Ագիտարանի 11-րդ զիսում. «Բազումը ի նրկից անոնի կից առ Մարքս և Մարիամ, զի միջիանուանը պնդում մասն եղանձն».

<sup>25</sup> Ա. Պոկրովսկին եղած է, որ երթևն Ղազարոսի նարությունը արտահայտել է մարդկային նորմն դժուքից դուրս բերելու ընթանուր մուռը (Խևին Ա. Պոկրովսկի, Եванգելիք և պատրիարքական կողմէն կատարած պատճենները, ՏՊՀ, 1892, շ. 252).

առնող եղբորը: Դեպքին ներկա գտնվող երկու երիտասարդներից մեկը վերցրել է գերեզմանաբարը, իսկ մյուսն օգնում է Ղազարոսին պատահեցից դուրս գալու: Տապալորիշ է Հիսուսի ձեռքի օրինող շարժումը:



Նկար 5

Գրիգոր Խլաթեցու այս ձեռագիրն առանձին ուշադրություն է գրավում ճանաչողական հշանակություն ունեցող մեկ նկարով: Ձեռագիր 14թ Էջում ներկայացված է մեզանում շատ հայտնի տարրական դպրոցի պատկերը: Թվում է, որ հայկական ձեռագրերում առաջին անգամ ենք հանդիպում նման տեսարանի և այն էլ Գրիգոր Խլաթեցու մոտ, որը միանգամայն բացատրելի է: Լինելով ուսուցչապետ, դպրոցի հիմնադիր ու վերատեսուչ, ունենալով բազմաթիվ աշակերտներ, Խլաթեցին տվյալ առիթն օգտագործել է երիտասարդ սերնդի դաստիարակման ու դպրոցի գաղափարները մասսապականացնելու համար: Նկարի ձախ կողմում, աթոռի վրա, բազմել է վարդապետը: Նա ձախ ձեռքին բռնել է խարազանը, աջ ձեռքին՝ մի տախտակ, վրան գրված «Երանեալ է այր որ»: Քահանայի դիմաց, ձեռքերը կրծքին մեղապարտի պես ծալած, կանգնել է աշակերտը. ավելի աջ,

նատակին, ծաղապատիկ նատել է մեկ ուրիշը (վարդապետի պատափորը), ձեռքին բարս միապոտելը, որուն պեսոր էին զարդ վարդապետին աշակերտներին խարազանելու համար<sup>26</sup>: Բոլորովին շմատեղով «տարրական դպրոցի» այս բացատրությունը, նկարից ստացած տարափորությամբ մենք կարող ենք մեկ այլ ենթադրություն ևս անել. քահանայի սոշն կանգնած է մի երիտասարդ այր (գուցե և հրա աշակերտը), որը ոչ թե ծովացել է տպվորելու դասը, այլ փոքրիկ զանցանք է կատարել, վարդապետը նրան միշեցնում է սաղմոսի հայտնի խոսքերը. «Երանեալ է այր, որ ոչ գնաց ի խորհուրդն ամբարշչուց. ի ճանապարհի մեղապարաց նա ոչ եկաց, և յարոսն ժանուից հա ոչ հասուաց<sup>27</sup> և պատուում նրան հիպոտահարելով: Ավելատարանը կոչված էր մարդկանց դաստիարակելու, նրանց զանցան «շեղումներից» ես պահելու նպատակին, մի բան, որին միանգամայն ձգտել էր ընդգծել նենց Ավելատարանում գրտելով այդ պատկերը<sup>28</sup>: Սաղմոսի այս խոսքերն ունեն և իրենց հայտնի մեկնաբանությունները, ըստ որի այն ավելի շատ արտահայտում է քրիստոնեական գաղափարախոսության հիմնական միտումը. Անրաբիշտներին շնենանել՝ և ընդունել ավելատարանական պատզամները, որոնք երանելի հատկանիշ են մարդու համար<sup>29</sup>: Խութեցու աշխատանքն այս առումով էլ շատ բնորոշ է Ավելատարանին, որպես առաջին սրբազն իրատ ամեն մի երիտասարդ ընթերցողի:

Ձեռագիր 15ա Էջում ներկայացված են պատվիրատունները՝ դեմ-դիմաց նստած. Հովհաննեսն երեցը և նրա հայր Դամիել քահանան: Վերջինս ձեռքերը պարզել է դեպի սուրբ Գիրը, որը գտնվում է Հով-

<sup>26</sup> Այդպատ է մեկնաբանել պատկերը պրոֆ. Լ. Ս. Խաչիկյանը ԺԵ դարի հիշատակարանների Ա. նատուրում, էջ 225 (արտահայտված է նաև նկարի պատճենը):

<sup>27</sup> Տես «Գիրը սաղմոսաց Դամիթ», Վեմետիկ, 1855, էջ 3 (Սաղմոս Ա. 1):

<sup>28</sup> Եթե դա տարրական դպրոց է, ապա ուշագրավ է Խլաթեցու դավանանքը՝ դպրոցում պատժի մնջ նաև ծնծը կիրաւելու համար: Ի դեպ, միանգամայն համամիտ ենք նաև պրոֆ. Լ. Խաչիկյանի այն կարծիքին, որ Խաթեցին ի դեմ այդ վարպետի իրեն է ներկայացրել՝ իր ինքնանկարը:

<sup>29</sup> Տես, օրինակ, Վարդան Բարձրաբերդի, Մեկնություն Սաղմոսաց Դամիթի, Աստրախան, 1797, էջ 17—20:

համեսի մոտ. դա նրանց համար լուս է ու փրկություն: Թե՛ պատվիրասուներ Հովհաննեսն ու Դանիելը և թե՛ նախորդ տէսարանի քահանան երկայացված են ջիշտ միաձն տարազով. մինչև ուրեմն բարեկան իշնող երկար ներքնազգեստներ, տրված կանաչով կամ դեղինով, վրաները ու թիկոնց՝ վգի մոտ ագուցվու մեծ կոճակով: Նրանք գլխներին ունեն արևելյան սպիտակ փակելներ (փառքոց, չալմա), որն այնքան էլ հատուկ չէ նայ նոգնորականներին:

Միաձն հստած այս տղամարդիկ աշբի են ընկնում պատվերավորնան ազգային հատկանիշներով՝ սև, մեծ աշքեր՝ խորհու ու կենդանի տպավորությամբ, երկար թիթ, ոչ շատ առաջ եկած թեր ու մորուք... Աշակերտների մոտ հետաքրքրականը գեղշկական պարզ հագուստներն են ու փուլփուլով գեղեցիկ բոլոցները: Դրանք թերևս «արդիականացնան» այն տարրերն են, որոնք, անկախ պատվերվող թեմայից (թեկու դա լինի խիստ կանոնիկ «այլակերպությունը»), հարազատ ու գրավիչ են դարձնում ամեն մի եկար, նրանց նոգու ու միտումների արտացոլումը դրսերում:

Տիպիկ վասպորականյան, գեղեցիկ բուսամտիվներով ու պայտաձև կամարներով զարդարված խորանները գրադեզնում են ծեռագրի 9ր—13ր էջերը: Խորանների գրիխունակները նեմանած են եռապուների վրա, որոնք, որպես կարգ, խարիսխների ու խյակների փոխարեն ունավորված բուսագրդեր են ունենում:

Գոյցներն այսուղև փոքր-ինչ խամրած են թվում. հավանաբար ձեռագիրը երկար ժամանակ անհնամ է մնացել: Լրիկ պահպանված են ալեստարանիշների դիմանկարներն ու անվանաբերքերը՝ 15ր—16ա՝ Մարտուն, 83թ—84ա՝ Մարկոս, 128թ—129ա՝ Ղուկաս, 208թ—209ա՝ Հովհաննես (Պրոտորովի հետ):

Շերունի ուղղությամբ պատկանող այս վարպետը, որին լիակատար կերպով հասկանալի է ամեն մի նկարի էությունը ու խորունկ միտումը, նոյնափ հմտութ էր գոյցի ու գծի արտահայտման հնարավորություններում: Այդ առումով նա հանդիսանում է վասպորականյան ոճի բարձր կատարողներից մեկը, որոշակիորեն ձևավորված գեղանկարչական այդ լեզվի տիրապետում է իր սկզբունքներով: Ուզու ենք

<sup>30</sup> Այդ մասին հանգամանուրեն խոսել ենք Վասպորականի մամրամբարշտորուսը նմիրնամ մեր գրում («Վասպորականի մամրանկարշտորուսը», վիր Ս. Երևան, 1975, էջ 76):

ասած լինել, որ վասպորականյան ոճը Խաթեցու համա մուածողի ու մեկնիշի համար ոչ միայն նմից եկող տեղական սովորությունների պարզ կիրառումն էր, ուսուցչից աշակերտ, նորից որդի փոխանցվող (ժողովրդական արվեստին բնորոշ հատկանիշ), սովորություն, այլն նպատակի ու անլիքի, պատկերացումների դրսւորման որույն միջոց:

Կյանքը դիտելով որպես արարշական հավերժ ստեղծագործ պրոցես, Խաթեցին արվեստում էլ իրականությունը պետք է դիտեր հավերժականության տեսանկյունով (և ոչ թե առօրյա անցողիկ շշափելի մասնամաներով): Խաթեցու պատկերած գեղարվեստական իրականությունը (նաև Վասպորականի մամրանկարիշների) նեռու էր պարզունակ իրապաշտությունից: Էականը պատմականի ու միջավայրի կոնկրետությունը չէր, այլ նրանց համարդկային-փիլիսոփայական ընդհանրացումը. այն, որ մարդը, կյանքը հավերժ անմասի գոյություններ են օժտված հախանամականի անունու ոժով ու գեղեցկությամբ: Այլ գաղափարներն են իրենց առավելագույն պարզեցված ու կարճառու ձևով մարմնավորում առանում Վասպորականի մամրանկարչության խիստ յորատիւնը ու հնամենի ոճում<sup>30</sup>:

Սյատեղից արդեն իր դերն է սկսում խաղալ նկարչի անհատականությունը, գծի ու գոյցի տիրապետումն նրա վարպետությունը: Խոկ այդ հատկանիշներում Խաթեցին պատշաճ բարձրության վրա է: Սրբեն թեմատիկայի աղղախի ըմբռնումը՝ մեկնաբանված գեղանկարչական արտահայտման որույն լեզվով, ինչպիսին խիստ կարճառությունն է, մի քանի գոյների հակառակի համարդությունն ու զարդարիչին կառուցվածքը, այդ մամրանկարներին հաղորդում է բանաստեղծական շոնչ, կերպարները հագեցնում ուժանութիւնական խորհրդավորությամբ: Յորաքանչյուր մասնաման ձևով ամրողական է ու արտահայտիչ: Զկա որևէ ավելորդ բան, լրացուցիչ առարկա, լրացուցիչ գոյցն: Բայց, ի տարրերություն Վասպորականի մի քանի այլ մամրանկարիշների, նա աշխատում է այդ, այսպես սասած, «սուլ» ոճը փրկել շոր էլորդությունը, որոնք կարող են կարդացվել միայն որպես քարացած խորհրդանիշներ, որպես ձևանիշներ: Խաթեցու մոտ անհանդիւրական թվացող ձևերում ինչ-որ

<sup>31</sup> Այս նորցերի շորջ խոսել ենք նաև Համբանեան Խիզանցուն նիմիրական մեր նորմանուրից միասին («Եջմիածին», 1974, էջ 49—57):

նոյզ կա, անորոշ մի կիբը, աննշմարելի, քայլ սրտամու մի բան, որով անմիջական կապ է ստեղծվում ընթերցողի հետ: Դա, ինչպես վերևում էլ առացինք, մասամբ գալիս է Խլաթեցու կերպարների տրօրինակ «արդիականացումից»: Որոշակի նշանակություն է ստանում նաև նրա զոտ կատարողական լեզուն: Սահմուն վրձինը երթան հասնում է ձևի բյուրեղացման, որը կարծես ներքին ինտառն էլ պարզորոշ է դարձնում: Չորովյանից խուսափելու համար միմնական զծին կից նաև տանում է սովորի պես մի նուրբ շերտ: Մարմնի բաց մստերում՝ կապտա-շագանակագույն երանգային խաղեր, իսկ հագուստներում՝ տիրապեսում է զարդարակալորումը՝ շարժմանը համընթաց ու ճաշակավորը: Նովինուկ զոտ պայմանական «անկեննամ» տարրերը այնքան ինքնատիպ ձևերով են տրվում, որը նոյնպես նպաստում է ընդհանուր տպալիորությանը՝ գետի ափը «Մկրտուրյան» տեսարանում, բնապատկերը՝ «Ելյակերպությունում», արմավենու ծառը՝

«Մուտք Երուսաղեմում» (ուղարկի կատարյալ վարպետությամբ արված):

Մեր նկարչի մոտ գովաները (որունք չորսը են կամ հինգը՝ կարմիր, կանաչ, դեղին, կապույտ, շագանակագույն) այնքան հագեցված ու վառ չեն, ինչպես նրան հայորդած Վասպորականի մի քանի մասնկարիչների ձեռագրերում: Բայց զծի հստակությունն ու, որոշ դեպքերում՝ փափկությունը, ասես լրացնում է գունային աղ մելմորյունը, մի տեսակ յորովի «գրաֆիկական» շահմեկանություն ստեղծում: Գունա-զծային արդարի դաշնությունը միաժամանակ հավաքվածություն է հաղորդում նորինվածքներին:

Այսպիսին է Գրիգոր Խլաթեցու կենացքությունն ու գործունեության համառոտ նկարագիրը՝ միջնադարյան հայ մշակույթի պայծառ դեմքերից մեկի, մտածողի ու արվեստագետի, որի թողած ժառանգությունն ու բարի անոնն անգնահատելի է մեզ համար:

